ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 20.05.2026թ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետև՝ Խորհուրդ**) ՝ նախագահությամբ Թամարա Բաղդասարյանի, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Լիլիթ Ղազանչյանի, էմին Բեգլարյանի, Դավիթ Մելքոնյանի, Արսեն Հարությունյանի, Ցոլակ Մարգարյանի, Ռուբեն Հակոբյանի և Պավել Գյուլումյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 20.05.2026 թվականի թիվ ԿԳ-26001-2-Ա որոշման (**այսուհետ նաև՝ Որոշում**) դեմ ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետ Գարիկ Ծատուրյանը (**այսուհետև՝ Դիմող**)՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև՝ Պալատ**) հայտնել է, որ փաստաբան Զարուհի Փոստանջյանը **(այսուհետև՝ Փաստաբան կամ Բողոքաբեր**), որպես ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձ Սպարտակ Ղուկասյանի շահերի պաշտպան, 2025 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 13:50-ի սահմաններում մուտք է գործել քրեակատարողական հիմնարկ:

Ըստ Դիմողի՝ քրեակատարողական հիմնարկ ներկայանալիս Փաստաբանը նախազգուշացված է եղել արգելված առարկաների ապօրինի շրջանառության և ներթափանցման հանգամանքի վերաբերյալ, սակայն ցանկացել է ՀՀ Կառավարության

13.04.2023թ. թիվ 543-Ն որոշմամբ արգելված իր համարվող բջջային հեռախոս ներկրել հիմնարկի բնակելի գոտի, սակայն այն հայտնաբերվել է ՔԿՀ ծառայողի կողմից՝ ռապիսկան սարքի զննությամբ, որը գտնվել է Փաստաբանի պայուսակում:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանի նկատմամբ ՀՀ ՎԻՎՕ 186-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է վարույթ:

Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբանի վարքագիծը:

Ի պատասխան Պալատի նախագահի բացատրության պահանջի՝ Դիմողը ներկայացրել է վարչական վարույթի նյութերը, մասնավորապես՝ արձանագրություն, զեկուցագիր և լազերային սկավառակ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.02.2026թ. Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 10.02.2026թ. ներկայացրել է փաստաբան Զարուհի Փոստանջյանի կողմից 30.11.2025թ. հիմնարկի բնակելի գոտի ՀՀ կառավարության 13.04.2023թ. թիվ 543-Ն որոշմամբ արգելված իր հանդիսացող բջջային հեռախոս ներկրելու դեպքի առթիվ տեսանկարահանող սարքերի ուսումնասիրության արձանագրությունը, թիվ 20/25 ՎԻՎ արձանագրությունը, վարչական տույժ նշանակելու մասին թիվ 20/25 որոշումը և Փաստաբանին հասցեագրած գրությունը:

Դիմողը հայտնել է, որ տվյալ դեպքին առնչվող այլ փաստաթղթերն արդեն իսկ ուղարկվել են ՀՀ փաստաբանների պալատ:

Պալատի նախագահի 05.01.2026թ. թիվ 1-Ա/ԿԳ-26001 որոշմամբ փաստաբան Զարուհի Փոստանջյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 6.2.1 (1) ենթակետի խախտման հատկանիշներով:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև՝ Հանձնաժողով**) 20.05.2026 թվականին կայացրել է թիվ ԿԳ-26001-2-Ա որոշումը, որով կասեցրել է փաստաբան Զարուհի Փոստանջյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-26001 կարգապահական վարույթը՝ մինչև թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործով վերջնական որոշում կայացնելը:

Փաստաբանը բողոք է ներկայացրել Որոշման դեմ Խորհուրդ, որը Պալատում մուտքագրվել է 12.08.2026թ.:

2. **ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի** 20.05.2026 **թվականի թիվ ԿԳ**-26001-2-**Ա որոշման էությունը**.

Հանձնաժողովը որոշմամբ արձանագրել է հետևյալը.

Թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործով կայացվելիք դատական ակտով կարող են բարձրացվել այնպիսի հարցեր և/կամ հաստատվել այնպիսի փաստեր, որոնք էական նշանակություն կարող են ունենալ կարգապահական վարույթի հետագա ընթացքի վրա: Մասնավորապես՝ Փաստաբանը դատական կարգով վիճարկում է Դիմողի՝ 11.12.2025թ. թիվ 20/25 որոշումը, որով վերջինս ենթարկվել է վարչական տույժի՝ քրեակատարողական հիմնարկ չթույլատրվող իր ներկրելու համար:

Հղում կատարելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.01.2023թ. թիվ 1/21-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգի (այսուհետ՝ Կարգ) 54.1. կետի 5-րդ ենթակետին, Հանձնաժողովը գտել է, որ թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործով քննարկման առարկա է դարձվելու Փաստաբանի կողմից այնպիսի արարք կատարելը, որը սույն կարգապահական գործի հարուցման հիմք է հանդիսացել:

Նկատի ունենալով վերոգրյալը, Հանձնաժողովը գտել է, որ անհնարին է տվյալ կարգապահական գործի քննությունը մինչև թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործով վերջնական որոշում կայացնելը:

3. **Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը**.

Փաստաբանը Հանձնաժողովի որոշման դեմ ներկայացված բողոքով խնդրել է վերացնել 20.05.2026թ. կարգապահական վարույթը կասեցնելու մասին որոշումը և պարտավորեցնել Հանձնաժողովին գործն ըստ էության քննելուն:

Բողոքաբերը, մանրամասն անդրադառնալով կարգապահական գործի փաստական հիմքերին և Որոշման անհիմն լինելու հարցին, նշել է, որ տվյալ դեպքում բացակայել է Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգի (**այսուհետև՝ Կարգ**) 54.1-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված կարգապահական վարույթի կասեցման հիմքը՝ գործի քննության անհնարինությունը:

Ըստ Բողոքաբերի՝ նշված դրույթի կիրառման համար անհրաժեշտ է, որ մինչև այլ գործով որոշում կայացնելը տվյալ կարգապահական գործի քննությունն օբյեկտիվորեն անհնարին լինի: Հետևաբար, վարույթի կասեցման համար բավարար չէ միայն արձանագրել, որ վարչական դատարանում քննվող գործը վերաբերում է նույն կամ փոխկապակցված փաստական հանգամանքների, կամ որ այդ գործով հաստատվող որոշ փաստեր կարող են նշանակություն ունենալ կարգապահական վարույթի համար:

Հանձնաժողովը պարտավոր էր հիմնավորել, թե կոնկրետ որ փաստերն ինքը իրավական կամ փաստական առումով ի վիճակի չէ ինքնուրույն հաստատել, ինչու են այդ

փաստերն անհրաժեշտ կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու համար, և ինչու է վարչական դատարանի կողմից դրանց նախնական գնահատումն այնպիսի անհրաժեշտ պայման, առանց որի կարգապահական վարույթի շարունակությունն օբյեկտիվորեն անհնարին է: Որոշումը չի պարունակում նման հիմնավորում:

Բողոքաբերը հայտնել է, որ կարգապահական վարույթի նյութերում արդեն իսկ առկա են դեպքին վերաբերող արձանագրությունները, զեկույցները, տեսանյութերը, ինչպես նաև բացատրություններ և այլ նյութեր: Բողոքաբերը գտնում է, որ Հանձնաժողովը պետք է պարզաբաներ, թե իր տրամադրության տակ գտնվող ապացույցների պայմաններում ինչու է զրկված դրանք ինքնուրույն ուսումնասիրելու, համադրելու և գնահատելու հնարավորությունից:

Ըստ Բողոքաբերի՝ կայացվելիք դատական ակտով փաստերի հնարավոր հաստատումը չի կարող նույնացվել Կարգով սահմանված գործի քննության անհնարինության հետ: Վարչական գործը և կարգապահական գործն ունեն տարբեր իրավական առարկաներ, իսկ Հանձնաժողովն օժտված է փաստաբանի վարքագիծն ինքնուրույն գնահատելու իրավասությամբ:

Այսպիսով, Բողոքաբերը նշել է, որ թե թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործն ու թիվ ԿԳ-26001 կարգապահական վարույթը բխում են նույն իրադարձություններից, սակայն ունեն տարբեր իրավական հիմքեր, առարկաներ և նպատակներ: Վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը ինքնաբերաբար չի կանխորոշում մասնագիտական-կարգապահական խախտման առկայությունը: Ըստ Բողոքաբերի՝ Որոշումը չի պարունակում կասեցման անհրաժեշտության վերաբերյալ բավարար, կոնկրետ և անհատականացված հիմնավորում:

Համաձայն բողոքի՝ մինչև այլ դատական գործով վերջնական դատական ակտի կայացումը վարույթի կասեցումը փաստաբանին թողնում է իրավական և մասնագիտական անորոշության վիճակում՝ անորոշ ժամկետով:

Բողոքաբերը, մեջբերելով ՄԻԵԴ որոշումներ, պնդել է, որ փաստաբանի անկախության երաշխիքները պահանջում են կարգապահական վարույթի նկատմամբ առանձնապես զգույշ և ինքնուրույն գնահատում:

Ըստ Փաստաբանի՝ Քրեակատարողական ծառայության հրապարակային հաղորդագրությունը և գործի ընդհանուր համատեքստը պահանջում էին Հանձնաժողովի կողմից խիստ անկողմնակալություն և անկախ գնահատում: Մասնավորապես, համատեքստում Փաստաբանների պալատի կարգապահական մարմնի դերն առավել էական է: Այն կոչված է հանդես գալու որպես փաստաբանական մասնագիտության ինքնակառավարման անկախ մարմին և ապահովելու փաստաբանի վարքագծի ինքնուրույն, օբյեկտիվ և մասնագիտական գնահատում՝ բացառելով այնպիսի մոտեցում,

երբ գործադիր իշխանության մարմնի կողմից հրապարակայնորեն արտահայտված դիրքորոշումը փաստացի դառնում է կարգապահական գնահատման ելակետ կամ կանխորոշող գործոն:

Բողոքաբերը գտել է, որ Հանձնաժողովը պարտավոր էր ոչ միայն ձևականորեն արձանագրել Քրեակատարողական ծառայության ներկայացրած նյութերի առկայությունը, այլև քննադատաբար գնահատել դրանց արժանահավատությունը, համադրել դրանք փաստաբանի բացատրությունների, տեսագրությունների, արձանագրությունների և գործի մյուս ապացույցների հետ և ինքնուրույն պարզել՝ արդյո՞ք առկա են կարգապահական պատասխանատվության համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքաբերը խնդրել է վերացնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 20.05.2026 թվականի «ԹԻվ ԿԳ-26001 կարգապահական վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

5. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Պալատի նախագահի 05.01.2026թ. թիվ 1-Ա/ԿԳ-26001 որոշմամբ փաստաբան Զարուհի Փոստանջյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 6.2.1 (1) ենթակետի խախտման հատկանիշներով:

2. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի իրավասու պաշտոնատար անձի 11.12.2025թ. թիվ 20/25 որոշմամբ Փաստաբանը ենթարկվել է վարչական պատասխանատվության: Նշված որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ 30.11.2025թ. քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս Փաստաբանը, հանձնելով իր մոտ առկա մեկ բջջային հեռախոսը, հետագայում իր պայուսակում ունեցել է ևս մեկ բջջային հեռախոս, ինչը վարչական մարմնի կողմից գնահատվել է որպես քրեակատարողական հիմնարկում սահմանված կարգի խախտում:

3. Փաստաբանը չի ընդունում իրեն վերագրված խախտման կատարումը և հերքում է թիվ 20/25 որոշման հիմքում դրված այն փաստական հանգամանքները, որոնք միաժամանակ վերաբերում են նաև սույն կարգապահական վարույթի փաստական հիմքին:

4. Փաստաբանը դատական կարգով վիճարկել է 11.12.2025թ. թիվ 20/25 վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը: ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործի շրջանակներում վիճարկվում է նշված վարչական ակտի իրավաչափությունը:

5. Հանձնաժողովը 20.05.2026թ. թիվ ԿԳ-26001-2-Ա որոշմամբ կասեցրել է թիվ

ԿԳ-26001 կարգապահական վարույթը՝ մինչև թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

6. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, կարգապահական գործի նյութերը, Հանձնաժողովի որոշումը, գտնում է, որ Հանձնաժողովի որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանների պալատի խորհուրդը փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև ***կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշումները վերանայող մարմինն է***:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.01.2023թ. թիվ 1/21-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգի (**այսուհետև՝ Կարգ**) 54.1. կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ *Հանձնաժողովը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կարգապահական վարույթի կողմի առաջարկով, կարող է որոշում կայացնել կարգապահական վարույթը կասեցնելու մասին, եթե՝ անհնարին է փվյալ կարգապահական գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ **վարչական** դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, բացառությամբ, երբ վիճարկվում է կարգապահական վարույթ հարուցելու մասին Փաստրաբանների պալատի նախագահի որոշումը:*

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ փաստաբանի կողմից քրեակատարողական հիմնարկում սահմանված կարգը պահպանելու պարտականության խախտման հարցը կարգապահական մարմինը, որպես կանոն, իրավասու է գնահատել ինքնուրույն: Նման կարգապահական խախտման առկայությունը պայմանավորված չէ պարտադիր կերպով նույն արարքի համար վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման առկայությամբ կամ դրա օրինական ուժի մեջ մտնելով:

Մասնավորապես, երկու վարույթներում էլ գնահատման առարկա են 30.11.2025թ. քրեակատարողական հիմնարկում Փաստաբանի մոտ երկրորդ բջջային հեռախոսի առկայության և սահմանված կարգի պահպանված լինելու հետ կապված հանգամանքները: Ընդ որում, Փաստաբանը ոչ միայն համաձայն չէ իր նկատմամբ կիրառված վարչական տույժին, այլև հերքում է վարչական որոշման հիմքում դրված այն փաստական հանգամանքները, որոնք միաժամանակ հիմք են հանդիսացել նաև կարգապահական վարույթի հարուցման համար: Այդ նույն հանգամանքները ներկայումս ենթարկվում են դատական ստուգման թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործի շրջանակներում:

Խորհուրդը հատկապես կարևորում է այն հանգամանքը, որ վարչական դատարանի կողմից վիճարկվող ակտի վերացման հիմքերը կարող են անմիջական նշանակություն ունենալ սույն կարգապահական վարույթի համար: Մասնավորապես, եթե վարչական ակտը վերացվի դրա հիմքում դրված փաստական հանգամանքների չհաստատվելու կամ այդ փաստերին տրված իրավական գնահատականի անհիմն լինելու պատճառաբանությամբ, այդ հանգամանքը կարող է էական նշանակություն ունենալ նաև կարգապահական վարույթի փաստական հիմքի առկայությունը գնահատելիս: Միևնույն ժամանակ, եթե վարչական ակտը վերացվի այնպիսի հիմքով, որը չի առնչվում Փաստաբանի վարքագծի փաստական կողմին, ապա վարչական գործի ավարտից հետո Հանձնաժողովը կարող է ինքնուրույն շարունակել այդ վարքագծի կարգապահական գնահատումը: Հետևաբար, տվյալ դեպքում կարգապահական վարույթի կասեցման անհրաժեշտությունը պայմանավորված չէ այն մոտեցմամբ, որ կարգապահական խախտումը կարող է հաստատվել բացառապես վարչական ակտով: Այն պայմանավորված է նրանով, որ Փաստաբանը հերքում է կարգապահական վարույթի հիմքում ընկած փաստական հանգամանքները, մինչդեռ իրեն վերագրվող խախտման բովանդակությունն ու դրա փաստական հիմքերը արձանագրված են 11.12.2025թ. թիվ 20/25 վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ, որի իրավաչափությունը ներկայումս վիճարկվում է թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործի շրջանակներում:

Այս պայմաններում, մինչև թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործով վերջնական դատական ակտի կայացումը, հնարավոր չէ կարգապահական վարույթի հիմքում ընկած վիճելի հանգամանքներին տալ ամբողջական և վերջնական գնահատական:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում առկա է Կարգի 54.1 կետի 5-րդ ենթակետով նախատեսված՝ կարգապահական գործի քննությունը մինչև թիվ ՎԴ/0895/05/26 վարչական գործով վերջնական դատական ակտի կայացումը շարունակելու անհնարինությունը, և Հանձնաժողովը հիմնավորված կերպով է կասեցրել կարգապահական վարույթը:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի 20.05.2026թ. թիվ ԿԳ-26001-2-Ա որոշումն իրավաչափ և հիմնավորված է, իսկ այն վերացնելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 20.05.2026 թվականի «Զարուհի Փոստանջյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-26001 կարգապահական վարույթը կասեցնելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-26001-2-Ա

որոշման դեմ Զարուհի Փոստանջյանի կողմից 12.08.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 20.05.2026 թվականի թիվ ԿԳ-26001-2-Ա որոշումը թողնել անփոփոխ:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Թամարա Բաղդասարյան**

12 սեպտեմբերի 2026թ.
թիվ ԿԳ/26-Ա
ք. Երևան